ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵՐԵՔ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2021

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. Ներածական մաս - էջ 2
2. Հապավումներ - էջ 4
3. Ամփոփագիր - էջ 5
4. Հաշվեքննության հիմնական արդյունքներ - էջ 7
5. Հաշվեքննության օբյեկտի ֆինանսական ցուցանիշներ - էջ 8

1. Ն Ե Ր Ա Ծ Ա Կ Ա Ն Մ Ա Ս

Հաշվեքննության հիմքը	ՀՀ հաշվեքննիչ պալատի 2021 թվականի մայիսի 11-ի թիվ 144-Ա որոշում:
Հաշվեքննության օբյեկտը	ՀՀ ֆինանսների նախարարություն:
Հաշվեքննության առարկան	ՀՀ ֆինանսների նախարարության 2021 թվականի պետական բյուջեի երեք ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:
Հաշվեքննության առարկայի չափանիշները	«Պետական պարտքի մասին» ՀՀ օրենք, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենք, «Հայաստանի Հանրապետության 2021թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք, ՀՀ կառավարության 2020թ. դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 2215-Ն որոշում, ՀՀ վարչապետի 2020թ. հունվարի 9-ի «ՀՀ 2021 թվականի բյուջետային գործընթացն սկսելու մասին» թիվ 5-Ա որոշում:
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2021 թվականի հունվարի 1-ից մինչև 2021 թվականի մարտի 31-ը ներառյալ:
Հաշվեքննության կատարման ժամկետը	2021 թվականի մայիսի 19-ից մինչև 2021 թվականի հուլիսի 30-ը:
Հաշվեքննության մեթոդաբանությունը	Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020թ հուլիսի 30-ի թիվ 132–Լ որոշմամբ հաստատված

«ՀՀ պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույց»-ի համաձայն:

Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ և վերակատարում ընթացակարգերը:

Հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային ստորաբաժանում

Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի չորրորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ Դավիթ Չիբուխչյանը:

ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ԱՆԴԱՄ Դ. ՉԻԲՈՒԽՉՅԱՆ

2. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

1. **Նախարարություն** – Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

2. **Ծրագիր 1** – (1006-13001) «Կառավարության պարտքի սպասարկում» «Կառավարության պարտքի սպասարկում (տոկոսավճարներ)» - (0170101) (Արտաքին տոկոսավճարներ):

3. **Ծրագիր 2** – (1006-13001) «Կառավարության պարտքի սպասարկում «Կառավարության պարտքի սպասարկում (տոկոսավճարներ)» - (01070101) (Ներքին տոկոսավճարներ):

4. **Ծրագիր 3** – (1212-12002) «Ֆինանսական աջակցություն տեղական ինքնակառավարման մարմիններին» «Պետական բյուջեից համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաներ» (01080101) (Պետական բյուջեից համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաներ):

5. **ԾՐԱԳՐԵՐ** - **Ծրագիր 1-ից Ծրագիր 3-ը** ներառյալ:

6. **Բազային Նախարարություն** – Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

7. Հոդված 1 – (442200) «Արտաքին տոկոսավճարներ»:

8. Հոդված 2 – (441100) «Ներքին տոկոսավճարներ»:

9. Հոդված 3 – (463300) «Պետական բյուջեից համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաներ»:

3. Ա Մ Փ Ո Փ Ա Գ Ի Ր

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ի շրջանակներում 2021թ. երեք ամիսների պլանի և ճշտված պլանի ընդհանուր տարբերությունը, որը վերաբերում է Ծրագիր 1-ին, կազմել է 40,000.0 հազ. դրամ և պայմանավորված է ընդհանուր գումարի ներքին վերաբաշխման միջոցով եռամսյա պլանի նվազեցմամբ: Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ում 2021թ. երեք ամիսների ֆինանսավորումը կազմել է 53,426,172.4 հազ. դրամ, որը ճշտված պլանի նկատմամբ կազմել է 100,0%: Նախարարության 2021թ. երեք ամիսների ԾՐԱԳՐԵՐ-ի ճշտված պլանի և ֆինանսավորման (դրամարկղային ծախս) տարբերությունը կապված հետևյալ հանգամանքների հետ (տես՝ Աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ -ի 2021թ. երեք ամիսներ ճշտված պլանի նկատմամբ թերֆինանսավորման պատճառների վերաբերյալ

(հազ. դրամ)

Թիվ	Ծրագրեր	2021թ. երեք ամիսներ			Թերֆինանսավորման պատճառներ
		Ճշտված պլան	Ֆինան-սավորում	Թերֆինան-սավորում	
1	Ծրագիր 1	23,147,509.4	23,821,7893	325,720.1	• 6-ամսյա ԱՄՆ դոլարի LIBOR, վեցամսյա EURIBOR և SDR տոկոսադրույքի կանխատեսումային և 2021թ. առաջին եռամսյակի վճարումների համար կիրառված փաստացի տոկոսադրույքների տարբերություն: • 2020թ. և 2021թ. առաջին եռամսյակների ընթացքում մի շարք վարկերի գծով մասհանումների պլանային ցուցանիշի էական թերակատարում: • SDR-ի ԱՄՆ դոլարի նկատմամբ կանխատեսումային և փաստացի ձևավորված փոխարժեքների տարբերություն: • Արտարժույթների նկատմամբ ՀՀ դրամի կանխատեսումային և փաստացի ձևավորված փոխարժեքների տարբերություն:
2	Ծրագիր 2	14,656,283.3	14,470,092.0	186,191.3	Կանխատեսվածի հանդեպ փաստացի եկամտաբերության տարբերությամբ
3	Ծրագիր 3	1,6,134,291.0	1,6,134,291.0	---	-----
Ընդամենը՝		53,938,083.7	53,426,172.4	-511,911.3	----

4. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Նախարարությունից պահանջվել է ամբողջական տեղեկատվության տրամադրում, որի ուսումնասիրությամբ, ինչպես նաև օգտվելով Նախարարության գանձապետական վճարահաշվարկային էլեկտրոնային («LSFINANCE» և «LSREP») համակարգերի շտեմարաններից, և հասանելի այլ պաշտոնական աղբյուրներից ստացվել է բավարար տեղեկատվություն սույն հաշվեքննությունն իրականացնելու համար:

Հաշվի առնելով այն հանգամանքը, ըստ որի 2021թ. երեք ամիսների ՀՀ պետական բյուջեի տարեկան հաշվեքննության իրականացման համար որպես ռիսկային է դիտարկվել՝ նախատեսված ծրագրերի և միջոցառումների մասով հաշվետու ժամանակահատվածի բյուջեի կատարողականի թերակատարումների և բյուջեի կատարողականի վերաբերյալ ՀՀ կառավարություն ներկայացրած հաշվետվություններում բերված ցուցանիշներում փաստացի կատարվածի իրական ծավալները մասնակի ընդգրկելու խնդիրները:

Նախարարության 2021թ. ՀՀ պետական բյուջեի երեք ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեության նկատմամբ իրականացված հաշվեքննության ընթացքում անհամապատասխանություններ և էական խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել:

5. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ի 2021թ. տարեկան պլանի հանրագումարը կազմել է 259,292,670.4 հազ. դրամ, իսկ ճշտված պլանի հնրագումարը՝ 259,137,670.4 հազ. դրամ: Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ի 2021թ. երեք ամիսների շրջանակներում պլանը կազմել է 53,978,083.8 հազ. դրամ, ճշտված պլանը՝ 53,938,083.8 հազ. դրամ, ֆինանսավորումը, դրամարկղային և փաստացի ծախսը ըստ ԾՐԱԳՐԵՐ-ի հանրագումարի կազմել է 53,426,172.4 հազ. դրամ (տարեկան ճշտված պլանի 99,1 %-ը): Նախարարության 2021թ. երեք ամիսների ֆինանսական ամփոփ ցուցանշները ներկայացված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ի 2021 թվականի երեք ամիսների ամփոփ ֆինանսական ցուցանիշներ

(հազ. դրամ)

Ծրագրային բյուջետային ֆինանսա-վորման անվանումը, *(ծածկագիրը)*	2021թ. տարեկան պլան	Փոփոխու-թյուններ տարեկան պլանում		**2021թ. տարեկան ճշտված պլան**	2021թ. երեք ամիսներ							Կատարման տոկոսը	
		ՀՀ կառավարության կողմից (+, -)	Վերադասի կողմից (+, -)		**2021թ. առաջին եռամսյակի պլան**	Փոփոխություն-ներ առաջին եռամսյակի պլանում		**2021թ. առաջին եռամսյակի**	Փաստացի ֆինանսավորում	Դրամարկղային ծախս	Փաստացի ծախս	Տարեկան ճշտված պլանի կատարման %	Հաշվետու ժամանակաշրջանի ճշտված պլանի կատարման %
		ՀՀ կառավարության	Վերադաս ի կողմից (+, -)										
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*	*10*	*11*	*12*	*13*	*14*
Նախարա-րություն ***(104021)***	259,232,850.9	**-115,000.0**	**-40,000.0**	259,077,850.9	53,978,083.8	--	**-40,000.0**	53,938,083.8	53,426,172.4	53,426,172.4	53,426,172.4	***20.8***	***99.1***
Ծրագիր 1	194,695,686.4	**-115,000.0**	**-40,000.0**	194,540,686.4	23,187,509.4	--	**-40,000.0**	23,147,509.4	22,821,789.3	22,821,789.3	22,821,789.3	***25.0***	***98.6***
Ծրագիր 2		--	--		14,656,283.3	--	--	14,656,283.3	14,656,283.3	14,656,283.3	14,656,283.3	***25.0***	***98.7***

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
Ծրագիր 3	**64,537,164.5**	--	--	**64,537,164.5**	16,134,291.1	--	--	16,134,291.1	16,134,291.1	16,134,291.1	16,134,291.1	***25,0***	***100.0***

Հաշվեքննությամբ պարզվել է, որ.

- **2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.**

ՀՀ պետական պարտքը կազմել է 4,164.3 մլրդ. ՀՀ դրամ կամ 7,968.5 մլն. ԱՄՆ դոլար, որից կառավարության պարտքը կազմել է 3,923.9 մլրդ. ՀՀ դրամ կամ 7,508.5 մլն. ԱՄՆ դոլար: Կառավարության արտաքին պարտքը կազմել է 2,926.2 մլրդ. ՀՀ դրամ կամ 5.599.5 մլն. ԱՄՆ դոլար, որից արտաքին վարկեր և փոխառությունները՝ 2,438.0 մլրդ. ՀՀ դրամ կամ 4,665.2 մլն. ԱՄՆ դոլար, ոչ ռեզիդենտների կողմից ձեռքբերված պետական գանձապետական պարտատոմսերը՝ 3.3 մլրդ. ՀՀ դրամ կամ 6.3 մլն. ԱՄՆ դոլար, ոչ ռեզիդենտների կողմից ձեռքբերված արտարժույթային պետական պարտատոմսերը՝ 480.5 մլրդ. ՀՀ դրամ կամ 919.4 մլն. ԱՄՆ դոլար և արտաքին երաշխիքները՝ 4.5 մլրդ. ՀՀ դրամ կամ 8.6 մլն. ԱՄՆ դոլար:

- **2021թ. մարտի 31-ի դրությամբ.**

ՀՀ պետական պարտքը կազմել է 4,591.6 մլրդ. ՀՀ դրամ կամ 8,652.0 մլն. ԱՄՆ դոլար, որից կառավարության պարտքը կազմել է 4,329.2 մլրդ. ՀՀ դրամ կամ 8,157.5 մլն. ԱՄՆ դոլար: Կառավարության արտաքին պարտքը կազմել է 3,301.5 մլրդ. ՀՀ դրամ կամ 6,220.9 մլն. ԱՄՆ դոլար, որից արտաքին վարկեր և փոխառությունները՝ 2,415.9 մլրդ. ՀՀ դրամ կամ 4,552.2 մլն. ԱՄՆ դոլար, ոչ ռեզիդենտների կողմից ձեռքբերված պետական գանձապետական պարտատոմսերը՝ 3.4 մլրդ. ՀՀ դրամ կամ 6.5 մլն. ԱՄՆ դոլար, ոչ ռեզիդենտների կողմից ձեռքբերված արտարժույթային պետական պարտատոմսերը՝ 877.8 մլրդ ՀՀ դրամ կամ 1,654.0 մլն. ԱՄՆ դոլար և արտաքին երաշխիքները՝ 4.4 մլրդ. ՀՀ դրամ կամ 8.2 մլն. ԱՄՆ դոլար:

Արտաքին վարկերի և փոխառությունների տոկոսավճարները 2021թ. երեք ամիսներին ձևավորվել են թվով 20 աղբյուրներից (թվով 7 օտարերկրյա պետություններ, թվով 10 միջազգային կազմակերպություններ և թվով 3 վարկավորող բազմակողմ հաստատություններ) և սահմանվել են թվով ընդամենը 227 տարբեր վարկային պայմանագրերով 8,093,199.3 հազ. դրամ կամ 15,367.9 հազ. ԱՄՆ դոլար հանրագումարով (տես՝ Աղյուսակ 3):

Աղյուսակ 3

2021թ. երեք ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջեից միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա պետությունների և առևտրային բանկերի կողմից ՀՀ կառավարությանը տրամադրված վարկերի սպասարկման մասին

Թիվ	Օտարերկրյա պետություններ, միջազգային կազմակերպություններ և առևտրային բանկեր	Տրամադրված վարկերի քանակ *(հատ)*	Վարկերի մասնաբաժին 31.12.2020թ.-ի դրությամբ ***(մլն. ԱՄՆ դոլար)***	Վճարված տոկոսավճարներ 31.03.2021թ.-ի դրությամբ	
				(ԱՄՆ դոլար)	***(հազ. ՀՀ դրամ)***
1	**ՎԶՄԲ** (Վերակառուցման և Զարգացման Միջազգային ԲանԿ)	33	793.3	1,440,893.0	756,294.8
2	**ԶՄԸ** (Վերակառուցման ն Միջազգային Ընկերակցություն)	66	994.5	2,139,283.8	1,128,968.4
3	**ՎԶԵԲ** (Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ)	12	20.6	0,0	0,0
4	**ԵՆԲ** (Եվրոպական Ներդրումային ԲանԿ)	26	133.0	0,0	0,0
5	**ԳԶՄՀ** (Գյուղատնտեսական Զարգացման Միջազգային Հիմնադրամ)	7	67.3	171,975.1	89,575.0
6	**ՕՄԶՀ** (ՕՊԵԿ-ի Միջազգային Զարգացման Հիմնադրամ)	5	50.2	688,289.8	364,006.56
7	**ԱԶԲ** (Ասիական Զարգացման Բանկ)	21	774.9	3,672,583.5	1,932,182.7
8	**ԱՄՀ** (Արժույթի Միջազգային Հիմնադրամ)	2	357.7	1,260,780.5	655,795.00
9	**ԵՄ** (Եվրոպական Միություն)	2	79.7	0,0	0,0
10	**ԵԶԲ** (Եվրասիական Զարգացման Բանկ)	3	317.0	0,0	0,0
11	**Գերմանիայի ՎՎԲ** (Վերականգնողական Վարկերի Բանկ)	22	278.1	69,353.5	36,905.1
12	**ՌԴ** (Ռուսաստանի Դաշնություն)	3	359.4	4,503,491.4	2,376,239.2
13	**ՖՀ** (ֆրանսիայի Հանրապետություն)	11	149.7	72,038.9	38,377.3
14	**ՃՀ** (Ճապոնիայի Հանրապետություն)	3	227.6	914,082.1	484,232.4
15	**ԱՄՆ** (Ամերիկայի Միացյալ Նահանգներ)	4	14.7	158,225.3	83,656.6
16	**Աբու Դաբիի Զարգացման Հիմնադրամ**	1	4.0	0,0	0,0
17	**Չինաստանի Արտահանման - Ներմուծման Բանկ**	1	23.0	234,651.8	124,440.5
18	**ԿԲՍ ԲԱՆԿ (Բելգիա)**	1	3.0	0,0	0,0
19	**Ռաֆայզն ԲԱՆԿ (Ավստրիա)**	1	7.7	18,590.6	9,903.8
20	**Էստե ԲԱՆԿ (Ավստրիա)**	3	9.8	23,714.3	12,622.0
	Ընդամենը՝	**227**	**4,665.2**	**15,367,953.5**	**8,093,199.3**

2021թ. երեք ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջեից պետական արտարժութային պարտատոմսերի սպասարկման գծով կատարված վճարումները հաշվետու ժամանակաշրջանում կազմել են 14,728,590.0 հազ. դրամ կամ 27,750.0 հազ. ԱՄՆ դոլար հանրագումարով (տես՝ Աղյուսակ 4):

Աղյուսակ 4

2021թ. առաջին եռամսյակի ընթացքում ՀՀ պետական բյուջեից պետական արտաարժույթային պարտատոմսերի սպասարկման գծով կատարված վճարումների մասին

Թիվ	Պետական արտարժութային պարտատոմսեր	Տոկոսավճարներ (արժեկտրոն և այլ վճարներ)	
		31.12.2020թ. –ի դրությամբ ***(հազ. ԱՄՆ դոլար)***	***(հազ. ՀՀ դրամ)***
1	2025թ. մարման ենթակա պետական արտարժութային պարտատոմսեր	17,875.0	9,487,335.0
2	2029թ. մարման ենթակա պետական արտարժութային պարտատոմսեր	9,875.0	5,241,255.0
3	2031թ. մարման ենթակա պետական արտարժութային պարտատոմսեր	0.0	0.0
	Ընդամենը՝	*27,750,.0*	*14,728,590.0*

Հաշվեքննությամբ պարզվել է, որ.

- **2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.**

Կառավարության ներքին պարտքը կազմել է 997.6 մլրդ. ՀՀ դրամ կամ 1,909.0 մլն. ԱՄՆ դոլար, որից ռեզիդենտների կողմից ձեռքբերված պետական գանձապետական պարտատոմսերը՝ 955.5 մլրդ. ՀՀ դրամ կամ 1,828.5 մլն. ԱՄՆ դոլար և ռեզիդենտների կողմից ձեռքբերված արտարժույթային պետական պարտատոմսեր 42.1 մլրդ. ՀՀ դրամ կամ 80.6 մլն. ԱՄՆ դոլար:

- **2021թ. մարտի 31-ի դրությամբ.**

Կառավարության ներքին պարտքը կազմել է 1,027.7 մլրդ. ՀՀ դրամ կամ 1,936.6 մլն. ԱՄՆ դոլար, որից ռեզիդենտների կողմից ձեռքբերված պետական գանձապետական պարտատոմսերը՝ 976.8 մլրդ ՀՀ դրամ կամ 1,840.6 մլն. ԱՄՆ դոլար և ռեզիդենտների կողմից ձեռքբերված արտարժույթային պետական պարտատոմսերը՝ 50.9 մլրդ ՀՀ դրամ կամ 96.0 մլն. ԱՄՆ դոլար: 2021թ. երեք ամիսների ընթացքում ՀՀ պետական գանձապետական պարտատոմսերի տոկոսավճարները հաշվետու ժամանակաշրջանում կազմել են ընդամենը 14,470,092.0 հազ. դրամ (տես՝ Աղյուսակ 5):

Համայնքների ներդաշնակ զարգացումն ապահովելու նպատակով պետական բյուջեից համայնքների բյուջեներին համահարթեցման սկզբունքով հատկացած դոտացիաների շրջանակներում համայնքներին չեն կարող պարտադրվել ֆինանսական համահարթեցման սկզբունքով հատկացված ֆինանսական միջոցներն օգտագործել որևէ կոնկրետ ծախս իրականացնելու կամ հաշվանցում կատարելու համար[1]: Դոտացիաների գումարները հաշվարկելու համար ՀՀ կառավարության կողմից լիազորած տարածքային կառավարման և զարգացման բնագավառում պետական լիազոր մարմինը Բազային Նախարարությունն է[2]:

Աղյուսակ 5

2021թ. երեք ամիսների ընթացքում ՀՀ պետական գանձապետական պարտատոմսերի սպասարկման գծով կատարված վճարումների մասին

(հազար դրամ)

Թիվ	Պարտատոմսի տեսակներ	Տոկոսավճարներ (արժեկտրոն և այլ վճարներ)
1	Երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսեր	13,591,748.0
2	Միջնաժամկետ արժեկտրոնային պարտատոմսեր	72,346.0
3	Կարճաժամկետ պարտատոմսեր	675,556.3
4	Խնայողական արժեկտրոնային պարտատոմսեր	130,441.7
	Ընդամենը՝	**14,470,092.0**

Պետական բյուջեից համայնքներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տվյալ տարում տրամադրվող դոտացիաների ընդհանուր գումարը (ներառյալ՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 93-րդ հոդվածի համաձայն պետության կողմից համայնքներին տվյալ տարում տրվող փոխհատուցման գումարները) սահմանվում է ոչ պակաս, քան տվյալ տարվան նախորդող երկրորդ բյուջետային տարում (2019թ.) ՀՀ համախմբված բյուջեի փաստացի եկամուտների հանրագումարի 4 տոկոսը[3]:

ՀՀ համայնքներին ՀՀ 2021 թվականի պետական բյուջեից տրամադրվելիք ֆինանսական համահարթեցման դոտացիաների գումարների հաշվարկում կիրառված տվյալները համապատասխան մարմինների կողմից տրամադրվել են Բազային Նախարարությանը, իսկ հողի հարկի և գույքահարկի տվյալները տրամադրվում են տեղական ինքնակառավարման մարմինների կողմից:

ՀՀ համայնքների բյուջեներին 2021թ. ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաները հաշվարկվել և տրամադրվել են

[1] *«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, 87-րդ հոդված:*
[2] *«Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենք, 2-րդ հոդված:*
[3] *«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, 87-րդ հոդված և «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, 20-րդ հոդված:*

հանրապետության բոլոր՝ թվով 502 համայնքներին, այդ թվում՝ ք. Երևանին, Արագածոտնի մարզում՝ 72 համայնքներին, Արարատի մարզում՝ 95, Արմավիրի մարզում՝ 97, Գեղարքունիքի մարզում՝ 57, Լոռու մարզում՝ 56, Կոտայքի մարզում՝ 42, Շիրակի մարզում՝ 42, Սյունիքի մարզում՝ 8, Վայոց ձորի մարզում՝ 8 և Տավուշի մարզում՝ 24 համայնքներին: Նախարարությունը գանձապետական համակարգի միջոցով համայնքներին յուրաքանչյուր ամիս փոխանցել է դոտացիաների գումարները և ՀՀ օրենքների կիրարկման արդյունքում համայնքների 2019թ. բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցման նպատակով նախատեսված հատկացումները[4]:

2021թ. տարեկան օրենքով նախատեսված 64,596,984.0 հազ. դրամից (դոտացիա՝ 64,537,164.5 հազ. դրամ + կորուստներ՝ 59,819,5.0 հազ. դրամ) 2021թ. առաջին եռամսյակում համայնքներին փաստացի փոխանցվել է 16,149,246.0 հազ. դրամ ընդհանուր գումար, որի մեջ ներառված է նաև Նախարարության Ծրագիր 3-ում (463400) «Օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների կորուստների փոխհատուցում» հոդվածով համայնքներին տրամադրված 14,954.9 հազ. դրամ գումարը, ինչը արտացոլվել է նաև Նախարարության Ծրագիր 3-ի արդյունքային, ոչ ֆինանսական ցուցանիշների համապատասխան հաշվետվության մեջ:

Հաշվեքննության առարկա հանդիսացող զուտ դոտացիաների հանրագումարը Նախարարության Ծրագիր 3-ում կազմել է 16,134,291.1 հազ. դրամ: Դոտացաների փաստացի տրամադրված գումարներն արտահայտվում են համայնքների բյուջեներում, վերջիններիս վերաբերյալ համայնքների ամենամսյա եկամուտների հաշվետվություններում, ինչպես նաև՝ պարբերաբար տեղադրվում համայնքների, ՀՀ մարզպետարանների և Բազային Նախարարության պաշտոնական կայքերում:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ Բազային Նախարարության կողմից ըստ տարբեր նախարարություններից և գերատեսչություններից ստացված ելակետային տվյալների հիման վրա հաշվարկված համայնքներին հասանելիք դոտացիաների գումարների, և Նախարարության կողմից, ըստ գանձապետական համակարգի դրանց հատկացման փաստացի ֆինանսական ցուցանիշների միջև տարբերություններ չեն առաջացել:

[4] *«ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք, թիվ 2 հավելված և ՀՀ կառավարության 2020թ. դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության 2021թ. պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 2215 որոշման 4-րդ հավելվածի 1-ին աղյուսակ:*